ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, գ. Սարատովկա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_12_» _փետրվարի_ 2013թվականի №_5-Ա

ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016 Թ.Թ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Սարատովկա համայնքի 2013- 2016 թ.թ. սոցիալ տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Սարատովկա համայնքի ավագանու 26 -ը հունվարի 2009 թվականի « Համայնքի 2009-2012 թ.թ. սոցիալ տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին » թիվ 5 որոշումը :

| Համայնքի ավագանու անդամներ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Նորիկ | Վելիցյան | | | |
| Սլավիկ | Անտոնյան | | | |
| Վաղինակ | Շահվերդյան | | | |
| Գենադի | Բաղդասարյան | | | |
| Դունյա | Իսկանդարյան | | | |

Համայնքի ղեկավար` ______________ / Գ. Մարդոյան /

2013թ.փետրվարի 12

Հավելված
Սարատովկա համայնքի ավագանու
12.02.2013թվականի թիվ 5-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 – 2016 թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար

Գ. Մարդոյան

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սարատովկա գյուղը հիմնադրվել է 1910 թ. – ին : Եկատերինա երկրորդի ժամանակ աքսորված մալականներից Բոգդանով ազգանունով մի մարդ բնակություն է հաստատել այդ տարածքում, զբաղվել անասնապահությամբ և այդ մասը անվանել են Բոգդանով խուտոր: Հետզհետե մոտակա գյուղերից եկել և բնակություն են հաստատել այստեղ և գյուղը անվանվել է Սարատովկա:

Գյուղի միջով անցնում է Տաշիր գետը: Վարչական տարածքով սահմանակից է Տաշիր և Ստեփանավան քաղաքներին:

Մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա: Գյուղի մոտով է անցնում Երևան-Թբիլիսի մայրուղին: Համայնքի տարածքում է գտնվում Գետավան փոքրիկ գյուղը՝ 24 առանձնատնով: Կլիման բարեխառն է. ձմռանը ցրտաշունչ և երկարատև, ամռանը՝ զով:

Հաճախ են երկարատև անձրևները և կարկտահարությունը, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ ու անասնապահությամբ զբաղվող գյուղացին:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 481 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 44 ,5% – ը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

| | |
|---|---|
| 1. երեխաներ ( 0 – 6 տ ) | -- 38 |
| 2. դպրոցական ( 7 – 17 տ ) | -- 60 |
| 3. 18 – 62 տարեկան | -- 145 |
| 4. թոշակառուներ | -- 81 |
| 5. հաշմանդամներ | -- 9 |
| 6. Աշխատունակներ | -- 26+0 |
| 7. Միակողմանի ծնողազուրկ | -- 7 |
| 8. Երկկողմանի ծնողազուրկ | -- 0 |

Գյուղն ունի 140 ծուխ, որոնցից 18 – ն ընդգրկված են « Փարոս » համակարգում:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համանքի ղեկավարի ( գյուղապետի ) կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

- աշխատակազմի քարտուղար -- 1 դրույք
- աշխատակազմի առաջատար մասնագետ -- 1 դրույք
- աշխատակազմի առաջին կարգի մասնագետ -- 1 դրույք
- հավաքարար -- 2 դրույք
- ցրիչ-բանվոր -- 1 դրույք

Աշխատակազմի ամբողջ ապարատը բաղկացած է 7 հոգուց: Ավագանու անդամների թիվը 5 – ն է:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով ( տես հավելված 2 )՝

- ակումբի շենք - կիսաշեն վիճակում
- կենցաղի տուն - բարվոք վիճակում
- ներհամայնքային ճանապարհներ - 7 կմ անբարեկարգ վիճակում
- ճանապարհների լուսավորվածություն - անմխիթար վիճակում
- գյուղապետարանի շենք - բարվոք վիճակում
- ջրմուղի ցանց - 6 կմ մաշված վիճակում
- գազի ցանց - բարվոք վիճակում

Ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1960թ.-ին, որի մաշվածությունը շատ մեծ է: 2000թ.-ին որոշ մասեր « Սնունդ աշխատանքի դիմաց » ծրագրի օժանդակությամբ վերանորոգվել է:

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 3 – 4 կմ ճանապարհ ու փողոցներ:

Համայնքը չունի ակումբի առանձին շենք, որի պատճառով բնակիչները զրկված են հոգևոր դաստիարակությունից:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով:

Ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով ջրի մատակարարումը կատարվում է ընդհատումներով:

## ԲՆԱԿԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 139 առանձնատուն, 52.10 հա տարածքով: Կարիքավոր և բնակարանով անապահով ընտանիքների թիվը 25 – ից ավելի է:

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը ¨ 2223.4 հա, որից՝

- Վարելահողեր ¨ 397.80 հա
- Խոտհարք ¨ 601.52 հա
- Արոտավայրեր ¨ 682.0 հա
- Անօգտագործելի հողեր ¨ 172.2 հա
- Ջրեր ¨ 35.0 հա
- Դաշտային ճանապարհներ ¨ 8.0 հա
- Արտադրական մաս (կովանոց) ¨ 17.0 հա
- Գերեզմանոց ¨ 2.0 հա
- Տնամերձ հողեր ¨ 52.10 հա
- Դպրոց ¨ 1.8 հա
- Ճահիճներ և ջրեր ¨ 125.66 հա

- Գյուղամիջյան փողոցներ ¨ 7.0 հա
- Ջկնային տնտեսություն ¨ 137.0 հա
- պետ.անտառ ¨ 81.38 հա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ոռոգման ջուր չունենալու պատճառով երաշտի տարիներին համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ. մթերքների արտադրությունը: Անձրևային տարիներին նույնպես գյուղացին կորցնում է բերքը:

Անասնապահությամբ զբաղվում է բնակչության հիմնական մասը: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց, այն վերջին տարիներին վերանորոգված է, գտնվում է բարվոք վիճակում: Դպրոցում սովորում է 73 աշակերտ: Դպրոցն ունի 22 աշխատատեղ:

## ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 2 ակումբ, մեկը՝ Գետավան գյուղում՝ առանձին շենք է գտնվում է հին, կիսաշեն վիճակում: Մյուսը՝ գյուղապետարանի ներքին հարկում է, որը նույնպես անմխիթար վիճակում է: Համանքը փաստորեն զրկված է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից:

Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժ - կետ, որը գտնվում է գյուղապետարանի շենքում: Բուժ. կետն ունի մեկ աշխատող:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքի կողքով անցնում է Երևան-Թբիլիսի մայրուղին,
- Համայնքի պահուստային հողերի և արոտավայրերի առկայությունը,
- Լճերի և ճահիճների առկայությունը, որը նպաստում է ձկնաբուծությամբ զբաղվելուն,
- Գյուղ.տեխնիկայի առկայությունը,
- Առանձնատների գազաֆիկացիան և հեռախոսներով ապահոված լինելը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ներհամայնքային ճանապարհների վիճակը,
- Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակը,
- համայնքը չունի ոռոգման ջրի ցանց ,
- Հողերի անբերրիության պատճառով գյուղացու եկամուտների նվազում,
- Համայնքը չունի անտառամերձ գոտիներ:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն,
- Համայնքի տարածքում է գտնվում «Ստեփանավան » ՓԲԸ օդանավակայանը:

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը (կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր)
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում
- Համայնքն ապահովել շուրջօրյա խմելու ջրով և կանխել սուր վարակիչ հիվանդությունները
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամանակ
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

2.

## 3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

### ԾՐԱԳԻՐ 1

### ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով,

- նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները,
- կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն, ծրագրով պահանջվող գումարի 90 % –ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 10 % –ը համայնքային բյուջեից և համայնքի ներդրումներից,
- կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,
- կազմել ԾԻԳ համայնքի անդամներից՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար:

## ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը, բնակչությունը կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, միաժամանակ կբարձրանա ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 4կմ ջրագծի կապիտալ վերանորոգման աշխատանքների արժեքը մոտավորապես կկազմի 7 մլն. դրամ:

# ԾՐԱԳԻՐ 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին

Խնդիր 1

- մինչև 2014թ. օգոստոսի 1 – ը կատարել հարթեցման աշխատանքներ համայնքի գլխավոր փողոցներում,

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Խնդիր 2

- մինչև 2015թ. հոկտեմբերի 1 – ը կատարել ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում՝ ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ,

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

## ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բարեկարգելով փողոցները՝ կսկսվի երթևեկության բարենպաստ պայմաններ:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3 – 4 կմ ճանապարհի նորոգման աշխատանքների արժեքը մոտավորապես կկազմի 4 մլն դրամ: Այն նախատեսվում է կատարել համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

# ԾՐԱԳԻՐ 3

# ԶԱՐԳԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ծրագրի նպատակներն են՝

- Բարձրացնել գյուղատնտեսական հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղ.մթերքների արտադրությունը
  Խնդիր 1

- մինչև 2014թ. ապրիլի 1–ը գյուղ.նախարարության և մարզպետարանի միջոցով համայնք ներմուծել 30տ բարձր բերքատու կարտոֆիլի ցերմացու:

- մինչև 2014թ. հունիսի 1–ը ձեռք բերել 30տ հանքային պարարտանյութ և 500 կգ թունաքիմիկատ:

10 հա հողատարածքում 200տ կարտոֆիլի արտադրության համար:

Խնդիր 2

- օգնել բնակչությանը՝ արտադրված կարտոֆիլի իրացման գործում:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

## ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը կբարձրանա գյուղ. մթերքների արտադրությունը:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնելու համար պահանջվում է 15 մլն դրամ:

# ԾՐԱԳԻՐ 4

## ԲԱՐԵԼԱՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՀԱՆԳԻՍՏԸ

Ապահովել բավարար պայմաններ համայնքում մշակութային միջոցառումներ իրականացնելու համար,

- աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը
- տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ,

Ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- ձեռքբերել ՀՍՆՀ-ի կամ բարերարների համաձայնությունը՝ պահանջվող գումարը հատկացնելու համար:
- վերանորոգել ակումբի շենքը Գետավան գյուղում, շենքը կառուցվել է 1963 թվականին , գտնվում է կիսաշեն վիճակում :

## ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու արդյունավետ անցկացնել,
- ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ գումարը մոտավորապես կկազմի 5 մլն դրամ:

## 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լոռու մարզի Սարատովկա համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

| | Եկամուտի տեսակը | 2012թ փաստ. | 2013թ նախա-տեսված | 2014թ կանխա տեսում | 2015թ կանխա տեսում | 2016թ կանխա տեսում |
|---|---|---|---|---|---|---|
| | ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ | 13158,8 | 13073,8 | 10130,0 | 1175,0 | 11900,0 |
| Ա | Հարկային եկամուտներ | 7326,7 | 10956,6 | 8430,0 | 8750,0 | 8900,0 |
| 1. | Հողի հարկ | 5287,9 | 7893,3 | 5400,0 | 5400,0 | 5400,0 |
| 2. | Գույքահարկ | 537,9 | 770,7 | 770,0 | 800,0 | 850,0 |
| 3. | Եկամտահարկ | - | - | - | - | - |
| 4. | Այլ հարկ. եկամուտներ | - | - | - | - | - |
| Բ | Տուրքեր | 45,9 | 20,0 | 20,0 | 30,0 | 30,0 |
| 1. | Պետական տուրքեր | - | - | - | - | - |
| 2. | Տեղական տուրքեր | 45,9 | 20,0 | 20,0 | 30,0 | 30,0 |
| Գ | Ոչ հարկ. եկամուտներ | - | - | - | - | - |
| 1. | Պետ. պահուստային հողերի վարձավճար | 1425,0 | 2262,6 | 2300,0 | 2500,0 | 2600,0 |
| 2. | Գույքի վարձավճարներ | - | - | - | - | - |
| 3. | Տեղական վճարներ | 30,0 | 10,0 | 10,0 | 20,0 | 20,0 |
| 4. | Այլ ոչ հարկ. եկամուտ. | - | - | - | - | - |
| Դ | Պաշտոնական տրանս-ֆերտներ, դոտացիա | 1465,4 | 1707,7 | 1700,0 | 3000,0 | 3000,0 |
| Ե | Եկամուտներ կապիտալի գործառույթներից | 4348,0 | - | - | - | - |
| Զ | Տարեսկզբի ազատ մնացորդ | 18,7 | 409,5 | - | - | - |

# 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| ՀՀ | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2012թ փաստ. | 2013թ փաստ. | 2014թ փաստ. | 2015թ փաստ. | 2016թ փաստ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Համայնքի տարածքը | հա | 2223,39 | 2223,39 | 2223,39 | 2223,39 | 2223,39 |
| 2 | Բնակչության թիվը | մարդ | 533 | 481 | 486 | 490 | 500 |
| 3 | Ծնունդը | մարդ | 6 | 6 | 5 | 7 | 6 |
| 4 | Մահացությունը | մարդ | 7 | 4 | 3 | 3 | 5 |
| 5 | Աշխ.ռեսուրսները,այդ թվում | մարդ | | | | | |
| | ա) զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի | մարդ | 167 | 165 | 170 | 175 | 180 |
| 6 | Գործազրկության մակարդակ | % | 31,3 | 34,3 | 35 | 35,7 | 36 |
| 7 | Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը | հատ | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 8 | Պահուստային հողեր | հա | 1321,36 | 1321,36 | 1321,36 | 1321,36 | 1321,36 |
| 9 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակ | % | 22,1 | 20 | 15 | 15 | 13 |
| 10 | Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը | կմ | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| 11 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը | կմ | - | - | - | - | - |
| 12 | Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր | հա | - | - | - | - | - |
| 13 | Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկար - ը | կմ | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| 14 | Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկար - ը | կմ | 7 | 7 | 5 | 3 | 1 |
| 15 | Մասնավոր բնակ. ֆոնդ | հազ.քմ | 11388 | 11388 | 11388 | 11388 | 11388 |
| 16 | Բնակկարիքավոր ընտանիքների թիվը | հատ | 26 | 25 | 23 | 20 | 18 |
| 17 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | l / օր | 20 | 20 | 15 | 15 | 10 |
| 18 | Ջրի կորուստները ցանցում | % | 25 | 30 | 35 | 40 | 50 |
| 19 | Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում | մարդ | 79 | 73 | 75 | 77 | 80 |
| 20 | Երեխաների թիվը մանկ.-մս. | մարդ | - | - | - | - | - |
| 21 | գյուղապետարանի և ենթակա ռուցվածքների աշխատողների թիվը | մարդ | 7 | 7 | 7 | 7 | 7 |

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը — 140, այդ թվում
   ա. անհատական տնտեսություններ — 140
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը. ց
   ա. կարտոֆիլ — 200
   բ. կաղամբ — 15
   գ. բանջարաբոստ. կուլտ. — 45
   դ. կաթ — 630
   ե. միս — 500
   զ. բուրդ — 70
   է. ձու — 4500 հատ
   ը. մեղր — 50
3. Ցանքատարածությունները
   ա. կարտոֆիլ — 50.5 հա
   բ. բանջարաբոստ. կուլտ. — 23.5
   գ. կաղամբ — 0.12
   դ. բազմամյա խոտեր — 705.6
4. Անասնագլխաքանակը, հատ
   ա. խոշոր եղջեր. անասուններ — 849 գլուխ
   այդ թվում՝ կովեր — 441
   բ. մանր եղջեր. անասուններ — 181
   այդ թվում՝ մայրեր — 157
   գ. խոզեր — 4
   այդ թվում՝ մայրեր — 0
   դ. թռչունները — 866
   այդ թվում՝ հավեր — 763
   ե. մեղվաընտանիքներ — 119
5. Գյուղատնտեսական մեքենքների և գործիքների քանակը, հատ
   այդ թվում՝ մասնավոր սեփականության
   անիվավոր տրակտոր՝ — 30
   տրակտորային կցասայլեր — 14
   գութաններ — 6

# ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 2

# ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Գյուղապետարանի շենք -- 1 միավոր
2. Ակումբի շենք գ. Գետավան -- 1 միավոր
3. Կենցաղի տուն -- 1 միավոր
4. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ -- 6 կմ
5. Ճանապարհային լուսավորվածություն
6. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ -- 7 կմ
7. Գազի ցանց

Հավելված 3

# ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Գյուղապետարանի շենք -- 1 միավոր
2. Ակումբի շենք գ. Գետավան -- 1 միավոր
3. Կենցաղի տուն -- 1 միավոր

Համայնքի սեփականություն համարվող շենքերը չեն օտարվում:

Հավելված 4

# ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑԱՆԿԸ

1. վարելահող - 106,58 հա
2. խոտհարք - 258,88 հա
3. արոտ - 682,48 հա
4. գյուղ.նշանակության այլ հողեր - 155,48 հա
5. բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր – 11,21 հա
6. արդյունաբերական հողեր- 6,86 հա
7. էներգետիկայի և տրանսպորտի հողեր - 0,11 հա
8. հատուկ պահպանվող հողեր - 1,71 հա
9. լճեր - 99,88 հա

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերը առաջիկայում չեն օտարվում , իսկ եթե օտարվեն , ապա համայնքի ավագանու որոշմամբ և օրենքով սահմանված կարգով:

Համայնքի ղեկավար՝ Գ. Մարդոյան